

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարւոյն 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ»,
Կամ Tiflis, Rédaction «Mschakъ»,
Տէլէֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առ շաբաթը):

Յայտարարութիւն ընդունւում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խաւքանչիւր տողաւորով 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Արասթուժան, 7 օգոստոսի.

ԵՂԻՍԱԲԵԹ ՄԻՐԱՅԱԲԵԿԵԱՆԻ

Վաղահաս մահվան առիթով հաւակցութիւն յայտնողներին և միջնորդողներին յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը, աղօթելով Աստուծուն, որ նրանց ազատ պահէ այդպիսի վշտից:

Գէորգ և Միրզաշան Ռուստամեան Միրզաբէկեաններ
Բագու 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական աշխարհից.—Ներքին Տնտեսական Թիֆլիս. Մամուլ. Նամակ Արաքսայից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ Տնտեսական Թիֆլիս. Արաքսայից. լուրեր.—Հեռագրային լուրեր.—ԹԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Կեանքի վէպեր:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ

Պարսկաստանը և Թիւրքիան նորից սկսել են իրանց վրա գրաւել քաղաքական աշխարհի առանձին ուղղութիւններ: Վերջին տարվայ ընթացքում, ինչպիսի գործերի պատճառով, եւրոպական քաղաքագետները դիտմամբ թող և հարեանցի կերպով էին վերաբերվում դէպի այն գործերը, որոնք կապ ունէին Բոսֆորի և Թէհրանի կառավարութիւնների բռնած դիրքի և վարած քաղաքականութեան հետ: Այժմ Հեռաւոր Արեւելքում քաղաքական կնիւնները պակասել են և հանդէս են եկել Մոսկուայի Արեւելքի հարցերը:

Պարսկաստանի մէջ եւրոպական ազդեցութիւնը աւելանում է ընդհանրապէս և հարցը միայն նրա մէջն է, թէ որ պետութեան գրաւած գերքն է աւելի ուժեղ և ձեռք բերած ազդեցութիւնը աւելի էաւան: Մի ժամանակ Պարսկաստանում շատ ուժեղ էր Անգլիայի ազդեցութիւնը. այժմ

ժամ այդ ազդեցութեանը Պարսկաստանի հիւսիսում մեծ հարուած է հասցրել և Ռուսաստանի կողմից, որ կարողացել է ոչ միայն իր գործարանական արդիւններով նուաճել պարսկական վաճառանոցները, այլ և իր ձեռքը գցել հաղորդակցութեան անհրաժեշտ կառուցումը և բանկային տներ հաստատել: Անկասկած Ռուսաստանի արած այդ առաջադիմութիւնը պէտք է նախանձ շարժէր և մրցութեան առիթ դառնար: Եւրոպական ներկայ ենք, թէ ինչպէս, հակառակ ազդեցութիւնների թիւղղութեան տակ, Պարսկաստանում նկատվում են տատանումներ և ազդեցիկ շրջաններում տրամադրութեան արագ փոփոխութիւններ:

Աւելի էական են այն գործերը, որոնք կապված են Բոսֆորի արբույնների հետ: Հին հարցերը, որոնք կապված էին գաւառներում բեֆորմներ մտցնելու պահանջի հետ, մի մաղաչափ անգամ առաջ են գնացել. իսկ ամէն օր առաջ են գալիս նորնոր հարցեր: Մակեդոնիայի և Ալբանիայի մէջ ծագած յուզումները, շնորհիւ պետութիւնների գործ դրած ներշնչումներին, թուլացան. բայց չօչնչացան և միշտ կարող են բորբոքվել: Այժմ հանդէս եկաւ Փրանս-թիւրքական ընդհանրաման ծանր խնդիրը, որը դեռ վերջնական բաւարար լուծում չէ ստացել: Եւրոպական լրագրիւնները թէեւ պահպանում են մի որոշ հանգստութիւն, բայց

չեն կարող չը խոստովանել, որ Թիւրքական Արեւելքը միշտ կարող է առիթներ տալ լուրջ բարդութիւններ առաջ բերելու համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Առեւտրական հայրենիքը անդադար դուրս են մղում միջազգային քաղաքականութիւնից արդարութեան սկզբունքները: Նորագոյն, խոշոր ապացոյց է Փրանս-թիւրքական ընդհանրումը: Ինչպէս յայտնի է, Փրանսիական դեսպանական յարաբերութիւնները խզված են երկու պետութիւնների մէջ, Փրանսիական մարտանաւերը լողում են դէպի արեւելք՝ սրի ոյժով ստեղծված և սրի ծանրութիւնից քայքայվող օսմանեան պետութիւնը վախճելու համար: Լսվում են նոյն իսկ յուզված ձայներ. հօ չի լինի պատերազմը Հետաքրքրական է, թէ ինչից է առաջացել այդ բաւական աղմկալի ընդհանրումը:

Փրանսիական մի ընկերութիւն, որի մէջ է և նախկին Փրանսիական մինիստր Մորանէ, վերցնում է Կ. Պոլսում ծովային քաղաքի և նաւարաններ շինելու ու շահագործելու կոնցեսիան: Պայմանները, ի հարկէ, ծանր էին, Թիւրքիայի պէս մի ծանրածանց մարմին ոչ ոք է ծանցում բարեբարութիւն անել չէ կարող: Եւ երբ այդ ծանր պայմանները սկսում են խեղդել Թիւրք կառավարութիւնը, վերջինս այլ եւս չէ ուզում կատարել իր ստորագրած պայմանագիրը: Փրանսիացիները պահանջում են՝ կամ կատարել այդ պայմանները, կամ գնել իրանցից այդ ձեռնարկութիւնը: Մանաւանդ ձեռնառն էր առաջարկութեան երկրորդ կէտը: Ընկերութիւնը ծախսել էր 20—25 միլիօն ֆրանկ, իսկ պահանջում էր, որ իրանից գնեն բոլոր գործը 41 միլիօն ֆրանկով: Թիւրքերը չափ ծանր են համարում իրանց համար այդ պայմանները: Միջամտում է դեսպան Կոնստանտին, որ Փրանէի վաղեմի բարեկամն ու ընկերն է. նա պահանջում է գնել ընկերութեան

գործերը: Հին, անպատիւ մանկը, Թիւրքիան, չէ կարողանում կատարել Փրանսիայի ներկայացուցչի պահանջը, թէեւ Կոնստանտին Լօրենցո անունով, դեռ 1870 թիւականներին պարտք տուած է եղել 2 միլիօն 400 հազար ֆրանկ, իսկ այժմ նրա ժառանգները նոյն տոկոսային հաշիւներով պահանջում են 40 միլիօն ֆրանկ: Այս երկու բանկիական հաշիւները համարեա թէ ոչինչ պաշտպանութիւն չէին գտնում Փրանսիական դեսպանի կողմից. բայց քաղաքիւնների ընկերութեան պահանջները իր հովանաւորութեան տակ առնելուց յետոյ, պ. Կոնստանտին սկսեց օտարով պահանջներ անել և այդ երկու հաշիւների վերաբերմամբ Թիւրք կառավարութիւնը գուցէ եւ կամենար մի կերպ վերջացնել այդ բոլոր գործերը. բայց նա փող չունի, անյուստի պարտական է վաղնց, վաղուց: Եւ ահա այդ գործիւն վերջաւանը. պ. Կոնստանտին, Փրանսիայի պատիւը պահպանելու համար, հեռանում է Կ. Պոլսից և ֆրանսիական կառավարութիւնը պատրաստ է առաջարկել Պարիզի Թիւրքաց դեսպանին, որ նա էլ հեռանայ Փրանսիական մայրաքաղաքից:

Պատմելով այս բոլորը, «Рѣчь. Вѣд.» լրագրի թղթակիցը ասում է, թէ Փրանսիայում շատ էլ գոհ չեն Կոնստանտին վարմունքից:

Եւ այս բոլորը—քաղաքականում են ուսման քաղաքական լրագրիւնները—միայն այն պատճառով է, որ սուլթանը չէ համաձայնում վճարել Լօրենցոյի և Տիւրքիի վախճանական հաշիւները: Եւ այս բոլորը տեղի ունի այն ժամանակ, երբ երրորդ համաշխարհային պատերազմի ժամանակահատիկը Կ. Պոլսում մինչեւ այսօր յամառութեամբ, սխառաբար հրաժարվում էր բարձրացնել իր ձայնը Ֆրանսիայի և Մակեդոնիայում հարստանալու ժողովրդի անհոգի և անպատիւ համար, որպէս զի չէ փչացնէ իր հիւսնային յարաբերութիւնները Բ. Դոան հետ և չը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԵԱՆՔԻ ՎԷՊԵՐԸ

I

ՄԵԼԽԱՆԵՐԸ

Յուրաքանչեւ մի առաւօտ մեծ քաղաքի զառիվայր փողոցից դանդաղ բարձրանում էր մի վեց-եօթ տարեկան երեխայ: Նա կրում էր իր մէջքին մի փոքրիկ կողով, որ պէտք է լիքը և ծանր լինէր, որովհետեւ մանուկը անդադար օայթալու էր օտաւած ձեան կոկ մակերեւոյթի վրա և հազիւ հաւասարակշռութիւնը պահելով զայլում էր:

Արտաքինից խեղճութիւն էր թափվում. մեծ քաղաքի բանուոր ծնողների այն գզգզած երեխաներից էր երեւում, որոնք ծնված օրից ստղծում են մութ ու խոնաւ նկուղների աղբերի մէջ, որոնք ամբողջ մի անգամ իրանց ուսին ընկնում են ապրիլի ջրալված կապարաւորների, կեղտոտ անկողինների մի անից միւս տունը և որոնց ծանօթ չեն հայրական յարկի, սեփական պարտեզի հետ կապված քաղաքի յիշողութիւններ: Մանուկը լաւ գիտէր, որ այն տունը, ուր իրանք ապրում են այժմ, ուրիշներն է, ինչպէս և շատ անհր, ուր եղել են նրանցից առաջ: Ի՞նչ փոքր, նա այդ մասին քիչ էր մտածում, միայն թէ կարողանար չուտ հասնել շուտ ազատվել այս անտանիքի ցրտից:

Եւ նա շտապում էր, որքան կարող էր, բայց նրա քայլուածքը դժուարացնում էին ցուրտը, ձիւնը և մանաւանդ կոշիկները, որոնք չափազանց մեծ էին նրա փոքրիկ ոտների համար, ու խեղճ երեխան հազիւ էր քաշ տալիս հին

կաշուի և մեխերի այդ բռնը: Այդ էլ վնաս չունէր, բայց մի կօշիկի կողքը պատռված էր և ամէն անգամ, երբ մանուկն այն ոտքն առաջ էր ձգում, փոքրիկ թաթի բթմամբ, մի օսկրոտ ու վտիտ մատ, դուրս էր սողում այդ քայլուածքից, ըստիւմ էր ձեռնել և կրկին ծածկվում, ինչպէս մի վախեցած սողուն, որ գլուխը դուրս է հանում ընդի և վտանգ գգաւում ներս քաշվում կրկին: Հօր կօշիկներն էին, որոնք ամբողջ տարիներ քաշ էին եկել քանութիւնը անհոգի օտարներից, նրանց հետ միասին տեսել էին գործարանական կեանքի բոլոր սեւ կողմերը, արօրել, սղմել էին նրանց կարկաստների չոր ծալքերով և այժմ էլ կախվել էին նոր սերնդի ոտներից, ասեմ, նրանց էլ առաջնորդելու անտեղ, ուր հայրն էր տառապել: Մի քանի շաբաթ առաջ, երբ նրան հազգրին այդ կօշիկներն առաջին անգամ, երբ երեխայի խղճուկ ոտները մէկէն կորան այդ անապին խորշերի մէջ, ուր հին օրերի ծալքերը, միանգամ ընդ միշտ կաղմված ու քարացած, քերթեցին նրա ընդող մօրթին, երբ նա առաջին անգամ փորձեց քայլել և ընկաւ ահադին աղմուկով, նա ցաւով նայեց իր ոտներին, և նրա փոքրիկ գլուխը չէր կարողանում հասկանալ, թէ ինչին են հարկաւոր այդքան մեծ կօշիկները, այդքան ծանր, այդքան չոր:

—Մայրիկ, Եւր օւրիշներին փոքր են ու թեթեւ:

—Մենք չունենք, գաւալս,—եղաւ պատասխանը:

Ոչ ոք այնպէս խորը կերպով և իսկոյն չէ ըմբռնում խեղճութեան, չքաւորութեան գաղափարը, որքան երեխան: Մայրն առաջ մենք չունենք, ուրեմն պէտք էր հագնել, պէտք էր քաշ տալ այդ բռնը, պէտք էր կրել նրա պատճառած ցաւը: Այսօր երեխան դարձեալ ցաւով

էր նայում իր ոտներին, բայց էլ չէր զարմանում կօշիկների ծանրութեան, այլանդակութեան վրա. նա այդ դժուարութեանը սովորել էր արդէն, կուգէր միայն, որ իր փոքրիկ վրտիտ մատը դուրս չը գար այն պատռուածութիւնը, որ չէր կարողանում իր անպէս քայլել, որ չէր կարողանում չը ընկնել, որ չէր կարողանում չը ընկնել, որ չէր կարողանում չը ընկնել:

Երեխան քայլում էր ու մտածում. նրա մէջքի փոքրիկ կողովն էլ, ինչպէս նրա կօշիկները, իր փոքրիկ պատմութիւնն ունէր: Այդ պատմութիւնը այժմ անցնում էր նրա գլխով իր բոլոր մանրամասնութեամբ: Ձեռնային սկզբից քայլն էր նրանով հենց այս ժամին քարածուխ բերում, վառարանը վառում: Խեղճ քոյր, եղբայրը երբ առաւօտեան դարձնելիս շտապով հաւաքում էր իր զգեստները, վազում էր դէպի վառարանը և այնտեղ կրակի առաջ կծկված հագնւում էր, նրա մտքովն անգամ չէր անցնում, թէ այսքան դժուարութեամբ է ձեռք բերվում անուշահոտ, միշտ հազաքոզ աղջիկը այսքան ցուրտ է քայլում: Եւ այդ քոյրը մեռաւ: Մի առաւօտ, երբ ինքը զարթնեց, քոյրն անշարժ պառկած էր իր անկողնում. հայրը չէր երեւում,—երեխան նրան համարեա երբէք չէր տեսնում,—մայրը կամացուկ լալիւ էր, փոքրիկ կողովը դառարկ էր, և վառարանը չէր վառվում: Երեխան լաւ իշխում է, որ այդ օրը զարթնելուց յետոյ ինքը շատ միտեց, երբ չորերը հագնում էր, և քոյր մահը ցաւ պատճառեց մանաւանդ այն պատճառով, որ այդ էր արեւելք եղել վառարան վառելուն, բայց նա ամենեւին չէր հասկանում, թէ վառարանի կրակը այդպէս դժուար է ձեռք բերվում:

Քոյր մահից յետոյ մայրն էր գնում ածուխ բերելու և երեխան մոռացաւ քոյր մահը, որովհետեւ առաւօտները զարթնելիս նա դարձեալ կարողանում էր իր չորերը տաք վառարանի առաջ հագնել: Այդ ժամանակ մտքովն անգամ չէր անցնում, թէ այդ կողովը վերջին վերջոյ իր մէջքին կը նստի: Բայց երեկ առաւօտ նա զարթնեց և մօրը գտաւ հիւանդ պառկած, կողքին մի փոքրիկ երեխայ, որ, չը գիտես ինչու, ձնում էր անդադար. սենեակը դարձեալ ցուրտ էր, վառարանը սառել: Նա չորերը հագաւ դողողալով: Մայրն ասաց, որ ինքը հիւանդ է, որ այս պատիկը մի նոր քոյրիկ է, գիշերն ընկել է երկնքից, որ այդ իր մեռած քոյրն է ուղարկել, որ մեծանայ, նրա փոխարէն գնայ, ածուխ բերի:

—Իսկ մինչեւ այդ,—ասաց մայրը,—դու պէտք է գնաս ածուխ բերելու:

—Մայրիկ, չէւ կը մեծանայ իմ քոյրիկը:

—Հա, որդի, շուտ կը մեծանայ, որ օնենակը տաք լինի, շատ շուտ կը մեծանայ:

Յետոյ մայրն աւելացրեց, որ իր տղան խեղճ է, քաջ աղայ է, որ նա կը լսի մօրը և իսկոյն կերթայ ածուխի. նա խօս մանաւանդ է ածխալաւանդ խանութի:

Եւ այսպիսով փոքրիկ կողովը յայնվեց նրա մէջքին: Ահա այս էր մտածում երեխան, երբ բարձրանում էր ձիւնոտ զառիվայրով: Յուրաքանչեւ էր, բեռը ծանր, ոտների տակ ձիւնը ճռնում էր, ալ ձեռքը, որով բռնել էր կողովի պարանոց, օտարիկ կապտել էր. նա դուրս հանեց գրպանից ձախ ձեռքը, բռնեց պարանոց և սկսեց փչել սառած ձեռքը տաքացնելու համար, բայց նրա խղճուկ չունէր էլ այնքան տաք չէր, ջանքերն էլ դուր անցան:

Վիճակը քանի դնում վատանում էր, բայց մայրն ասաց, որ նա խելօք, քաջ աղայ է, նա

Թիւններով այդպիսի լանձնատոգողութեան կազմակերպումը չէ նախատեսված:

29

Օգոստոսի

ՊԵՏԵՐՔՈՒՆԻՅԱՆ. «Օգոստոսի 28-ին Թագաւոր կայսրը եւ Թագուհի կայսրուհի Ալեքսանդր Ֆէօդորովնան Օգոստոսական Զաւակների հետ մեկնեցին Դանիայից. Թագաւոր կայսրը՝ «ПТАНДАРТЪ» զբօսանաւով՝ դէպի Դանիյդ, իսկ Թագուհի կայսրուհին Օգոստոսական Զաւակներով («Полярная Звезда») զբօսանաւով՝ դէպի Կիրիլ Օգոստոսի 28-ին, Նոյա Մեծաթիւնների Դանիայից մեկնելու օրը, «ПТАНДАРТЪ» զբօսանաւի վրա կայացաւ նախահաշ. նախահաշին երեկոյ էին Թագաւոր կայսրը, Թագուհի կայսրուհին Մարիա Ֆէօդորովնա եւ Ալեքսանդր Վա Ֆէօդորովնա, ղանիական Թագաւորը, մեծաթիւնների բազմութիւնը եւ Թագուհին, յունաց Թագաւորը, Նորին Բարձրութիւն Թագաւորական Սենդի Ռաւնի Օլգա Ալեքսանդրովնա, ղանիական Թագաւորացի պրինցը եւ պրինցուհին, պրինցուհիներ՝ Տիքա, Լուիզա, Մօզ, Վիկտորիա, Ալեքսանդրինա եւ Ինգէլֆորդ, պրինցներ՝ Նորին Գրեյ, Պետր Ալեքսանդրովիչ, յունական Խիլիսի, Պետր Փիլիպպոսովիչ, յունական Կալամակի եւ արտաքին գործերի մինիստրները, Նորին Մեծութեան Փրագ-կապիտան Լոմէն եւ չեխալմարի տղայները: Նախահաշից յետոյ բոլոր Օգոստոսական Սենդի առջև Մեծ-Բրիտանիայի Թագաւորի «Օսթրն» զբօսանաւը, իսկ Թագաւոր կայսրը «ПТАНДАРТЪ» զբօսանաւով մեկնեց դէպի Դանիյդ:

Կ. ՊՕԼԻՍ. Ռուսաց ղեսպան Զինովիեւի խառնուրտ պնդումները չորհրդ. սուլթանը չէմեզ հետզհետեւ Հին Սերբիայի պաշտօնական մի քանի անձներ, որոնք գլխավորապէս մեղադրվում են նրանում, որ այլաբանությունները հրդուրում էին ուղղափառ ազգայնականութեան դէմ: Այժմ արդէն հետաքննված են Պրիշտինի Բազմազգայն Զեմալ-բէյ եւ Միտրովիցի, Նոր Կապարի եւ Պրիշտինի օստրիական կոմիսարները: Մի եւ նոյն ժամանակ հնչողութիւնը տրվի հայրենիք վերադառնալու: Կոստովի քանակիչներին, որոնք փախել են Սերբիա մանցեալ խառնակութիւնների ժամանակ:

ՐՈՒՅԻՑԱՆԸ. Առաւօտեան ժամի 9-ին հրաւորակցված է հետեւեալ բերլլեռէնը. «Նախահաշի վրէժակը այս առաւօտ վերին աստիճանի ճանգաստացուցիչ է: Եթէ ոչ մի բարձրութիւն առաւ չը գայ, կարելի է սպասել, որ շուտով լը լաւանայ: Երակազարը՝ 104 է, տաքութեան աստիճանը՝ 99,8, չնչառութիւնը՝ 26: Ջրառութիւնը բերնումն են չափում: Բժիշկ Պարկ յայտնեց, որ Մակ-Կիլն լաւ է ընկել զարթնելիս աշխոյժ էր: Նա նոյն իսկ խօսակցել է: Բնական ճանապարհով կերտուող ղեռն չէ նշուել:

ՐՈՒՅԻՑԱՆԸ. Կէսօրից յետոյ 3 ժ. 20 ր. բերլլեռէնից երևում է, որ այս առաւօտ հրաւորակցված բարենպաստ բերլլեռէնից յետոյ խառնաճիւր վրձակում ոչ մի փոփոխութիւն տեղի չէ ունեցել: Երակազարը՝ 100 է, տաքութեան աստիճանը՝ 100, չնչառութիւնը՝ 28: ԶԻԿԱՅՕ. Անիշխանական էմմա Գոլշման Երակազարը՝ 100 է:

ՊԱՐԻՉ. Ինչպէս հաստատվում է կրտապաշտօնական աղբիւրից, Թիւրքաց զաւանի օստրիականութեան գլխավորները Ֆրանսիայում՝ Երեւոյն-բէյ եւ Լիպպալիզան՝ արտաքննված են Ֆրանսիայից:

Կ. ՊՕԼԻՍ. Պարիզի Թիւրքաց ղեսպան Մուրթ-բէյ այսօր ժամանեց այստեղ:

ԿԱՆԷՍԱ. Գերագոյն կոմիսար արքայազն Էտրիկ հրամանագրով իրանց պաշտօնից հեռացված են ֆինանսական գործերի կրտական խորհրդի անդամը եւ արքայապաշտօնական գործերի խորհրդի անդամը, պաշտօնում մնացել է իրանի ներքին գործերի խորհրդի անդամը:

ԿԻՄԲԵՐԼԷՍ. Պետական դաւաճանութեան գործերը քննող դատարանը այսօր հոլանդացի Բանայ Ակերմանին դատապարտեց մի տարբար բանտարկելութեան եւ 250 ֆունտ տուանքի, իսկ Հէրցոլդ Բարրէնտոն քանակալին՝ ատապարտեց մէկ ու կէս տարվա՝ բանտարկելութեան եւ 500 ֆունտ տուգանքի, փոխարինելով ատաքննիչ, եթէ անկարող լինի այդ էլի մի տարի բանտարկելութեամբ:

Կ. ՊՕԼԻՍ. Բոլաբաղական արտաքին գործերի մինիստրը դիմեց բոլաբաղական արտաքննաժամանակային պաշտօնական գործակալներին միջաբերականով, որի մէջ յայտնում է, որ բոլաբաղական կառավարութիւնը այսուհետեւ ոչ չի տալ Բոլաբաղական մակերդնական կեանքներին ուղի է քանդակող օրոգորութեան:

որ համաձայն է տեղական օրենքներին: Կա-
ռավարությունը հաստատ վճար է անհայտ
խառնություններ գործել յիշեալ կոմիտէի բոլոր
նոր փորձերի դէմ՝ անհրաժեշտ բանութիւններ
եւ գործողութիւններ կատարելու Եւրոպական
Թիւրքիայում գտնվող առեւտրական գործա-
կաններին առանձնապէս պատուիրվում է բոլոր
յարմար դէպքերում բացառել բոլորական
կառավարութեան հայեցողքները այդ ոգով:

ԲՆԼԳՐԱԿ. Կիսապաշտական «Дневник»-ը
յայտնում է, որ օտարազգի լրագրողներում հա-
զորոված լուրերը ճշմարտամի ժամին անհիմն են
եւ ժողոված են:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՎ ՅԱՅՆՈՒՄ Է

ԱՐԱՍՏՈՒՄԱՆ. Պատասխանատու կարգադրիչին: Ձեր
հայրը չենք կարողանում տպագրել լոկ այն պատ-
ճառով, որ ձեր ստորագրութիւնը անկարելի է կար-
դալ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՎ ՅԱՅՆՈՒՄ Է
Հրատարակչին: ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆՆԱՆ
ԻՍԱԶԱԿ ՄԷԼԻԻ-ԱՆԱՄԱՆԱՆ:

ՅԱՅՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԱՒԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիս, Վորոնցովի արձանի հանդէպ)
ա մ լ ճ օ Ր, ք ա ճ ի կ ի ռ ա կ ի օ Ր Ե Ր Գ:
Ա Ռ Ա Ռ Ց Ն Ե Ր Ը

Բ. Ա. Նախասարգեան—11—12 ժ. վարարու-
թեան, վերական (թիֆլիս) և միգրան. հիւանդ.
Կ. Մ. Ձիկովանի—9—10 ժ. ալբի, ներքին և
նեարդալիս:
Կ. Բ. Գրիկով—12—1 ժ. ականջի, քթի և կ-
կորդի:
Ջ. Բ. Բարաբանեան—11—12 ժ. կանանց և երե-
խայց հիւանդ.
Ս. Պ. Կարապետեան—1—1/2 ժ. ներքին և երե-
խայց:
Ե Ր Ե Վ Ո Ն Ե Ր Ը

Ն. Ն. Ռոստոմբեկով—6—7 ժ. վարարու-
թեան:
Բ. Բ. Գրիկով—7—8 ժ. ականջի, քթի և կ-
կորդի:
Բ. Ա. Նախասարգեան—7 1/2—8 ժ.
վար 50 կ. չարտնեցող ձրի համախորհրդի (կոն-
սիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Օ. Տ. Առվաբանի—տանը, ծաղկահատ և բժշ-
կական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.:
Հիւանդանոցի վերահսկող
Բժշկական ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլ-
առութեամբ: Մեծ արկղիկ 5 բուրձի, փոք-
րը—8 բ. եւ 1 բ. 50 կ.:



ՆՈՐ ՄԻՋՈՑ

Մազերը բաւարարում եւ ամրացնելու համար,
ոչնչացնում է թեփու Դուրս է եկել նաեւ
բարձրագին Նոր միջոց

ՁՈՒԽԱՆ

Երեւանի քննութիւն եւ օպիտակութիւն
տալու համար, ոչնչացնում է արեւի պատ-
ճառած սեւութիւնը, ճանքերը, ապիս է կա-
շուին քնքուծիւն եւ օպիտակութիւն: Այդ
գնեք չափաւոր են. մեծ օրուակը, արկղի-
կի մէջ, 2 բուրձի, փոքրը—1 բ. 50 կ.
Մախում են բոլոր պարֆիւմերական եւ
գեղարվեստական խանութներում: Գլխա-
ւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում,
Պուշկինական փողոց տ. № 15, քնակա-
րան № 12. պահեստի բաժանմունքները
գտնվում են. Թիֆլիսում կովկասեան գե-
ղատան ապրանքների վաճառման ընկերու-
թեան խանութում՝ Սրեանեան հրապարակ
եւ նրա բաժանմունքում, Միքայէլեան փո-
ղոց եւ Բազում. նաեւ Միքայէլեան կա-
մուրջի վրա, Պապովի եւ Արխանգելովի գե-
ղաներում: Օտարազգաբազմիկների պա-
տուէրները կատարվում են անհիմապէս՝
պատուով:
69—100

ԴԱՍԱԳՐՔԵՐ ԿՐՈՆԻ

յատկապէս կազմած պետական դպրոցների հա-
մար (հոգեւոր եւ մարմնաւոր դպրոցական իշ-
խանութիւններից հաւանութիւն գտած):

- 1) Առաջին գրքոյի, պատրաստական
դասարանների համար «Աղօթքներ եւ գլխաւոր
օտերի պատմութիւններ», գինն է 20 կօպ.
 - 2) Երկրորդ գրքոյի, առաջին դասա-
րանի համար, «Հին Ուխտի Պատմութիւն», գինն
է 30 կօպ.
- Գրավաճառանոցներին եւ ուսումնարաննե-
րին հարկւրին 30% զեղողութիւն:
- Դիմել: Թիֆլիս. Սրտ. Էշնիկ Երշնի-
կանց.

Թէհրանում նորակազմ «ՓԱՐՈՍ» տպարանի
Ակցիոներական Ընկ. Վարչութիւնը հրաւի-
րում է մի ՀՄՈՒՑ

Գ Ր Ա Շ Ա Ր,

որ իմանայ հայերէն, ռուսերէն, ֆրանսերէն
եւ պարսկերէն (վերջինս պարտաւորեցողիչ
է) լեզուներով գիր շարել. ծանօթ պէտք է
լինի նաեւ տպարանական մեքենաների սարք-
ու կազմի հետ (МОНТИРОВКА):
Պայմանների մասին գրիմի՝ Administration
de l'imprimerie «Pharos», Téhéran.

ԹԻՖԼԻՍԻ ԳԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, որ իր ատենում
այս օգոստոսի 28-ին ցերեկվայ ժամի 12-ին,
նշանակված է աճուրդ,—1) մօտ 66,00 պ. սած.,
հատ. 0,375X0,25 պ. ս. եւ մօտ 25,00 պ. ս.,
հատ. 0,16X0,10 պ. ս. բէտօնային կոյուղի շի-
նելու Միքայէլեան փողոցում գոյութիւն ու-
նեցող կոյուղուց Դաւիթովսկայա փողոցով մին-
չեւ Բարաթովի տունը, եւ 2) մօտ 85,00 պ.
ս., հատ. 0,33X0,22 պ. ս. բէտօնային կո-
յուղի՝ Աւստին փողոցում գոյութիւն ունե-
ցողից Աւստին եւ Պալլովսկան փողոցներով
մինչեւ Փրիդոնովի տունը: Աճուրդին մասնակ-
ցել ցանկացողները կարող են տեսնել պայ-
մանները Վարչութեան Ծրարարական Բաժ-
նում բոլոր լի օրերը, ցերեկվայ ժամի 8—1-ը:
3—3

Ձ Ո Ւ Խ Ա Ճ Ե Ա Ն

ընդունում է աշակերտներ կար ու ձեւի
եւ եւրոպական ձեռագործների համար, սեպ-
տեմբերի 1-ից:
Վերամիջոցայա փողոց, № 14, տուն Ե-
ղիազարովի:
(Կ. հ.) 5—8

ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ

Գ Պ Ր Ո Ց

ՕՐ. Ն. Գ. ՇԱՀՈՒՄԵԱՆԻ

Աշակերտներին ընդունելութիւնը ամենայն
օր, ժամը 9-ից—2-ը:
Հասցէն՝ Թիֆլիս, Մոզնու եկեղեցու հան-
դէպ, № 13. 4—8

Մամուլի տակից դուրս եկաւ.

Վ. ՓԱՓԱՋԵԱՆՏԻ

«Պ Ա Տ Մ Ո Ւ Ա Ծ Ք Ն Ե Ր»

Վաճառվում է Թիֆլիսի Կենտրոնական գրա-
վաճառանոցում: 4—5

Բացված է բաժանորդագրութիւն

ԱՐՇԱԿ ՀԱՅՎԵՐԴԵԱՆԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԻ

առաջին մասի


Բաժանորդագրին է 20 կօպ.

Դիմել՝ Թիֆլիս. Табачный магазинъ
«Прогрессъ», подъ собраниемъ.
(Կ. հ.) 2—2

Մ. Տ. ՎԱՍԻԼԵՎԻ

ՋՈՒԹԱԿԻ ՄԱՍՆԱՌՈՐ ԿՈՒՐՍԵՐ

Պարապմունքները սկսվում են սեպտեմբերի
1-ից: Վարձը ամբողջ ուսումնական տարվայ
համար—80 ռուբլի. վճարը կիրառականներով:
Ընդունելութիւնը ամենայն օր, ժամի 10-ից
մինչեւ 5-ը եւ 5-ից մինչեւ 7-ը: Гриводов-
ская, № 5. 5—11



ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ եւ ՊԱՆՍԻՕՆ
Ա. ՏԵՐ-ՅԱԿՈՎԵԱՆԻ
ՊՐՕԳՐԻՄՆԱԶԻԱՅԻ ԾՐԱԳՐՈՎ
Ընդունում է աշակերտներ, պատրաստում է գիմնազիական երի, կադետների
կօրպուսի, գեմլէմէրների, բէալական, առեւտրական եւ այլ ու-
սումնարանների համար:
Ուսումնարանում ուսուցանում են բարձրագոյն ուսումնաւար-
տած մասնագէտներ, գիմնազիական ուսուցիչներ: Աւանդելի առարկա-
ներն են՝ կրօն, ռուսաց, հայոց, ֆրանսիական, գերմանական, լատինական, յունաց,
գրաց լեզուներ, թուրքաւոճիւն, ալգեբրա, երկրագիտութիւն, աշխարհագրութիւն,
պատմութիւն (ուսաց եւ ընդհանուր), բնական գիտութիւն, նկարչութիւն, գրու-
թիւն, երգեցողութիւն, կրթչառութիւն:
Նոյն տեղը ընդունվում են ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐ: Օտարազգաբազմիկների համար
կան ամենայն յարմարութիւններ:
Հասցէն. ԹԻՓԼԻՍ, Դանովսկայա լ. № 11. 1—5

ՊԱՆՍԻՕՆ ԵՒ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
Գ. Ի. ՏՕՄԱՍԻ
Կիրոնայա եւ Էրզրումիական փողոցների անկիւն № 18/95: Ընդունվում են երկու-
սեան երեխաներ: Ուսումը կը սկսվի սեպտեմբերի 1-ից:
(12, 19, 23, 30 եւ 1 սեպտ.) 3—5

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ
ԵՒ
Մ Ա Ն Կ Ա Կ Ա Ն Պ Ա Ր Տ Է Ջ
ՏԵՐ-ՅԱԿՈՎԵԱՆԻ
(Սօլովի, Բէհրովսկան փողոց, № 46)
Աշակերտներին ընդունելութիւնը օգոստոսի 25-ից, ուսումը սկսվում է սեպտեմբերի 1-ին:
(Օգոստ. 23, 30, սեպտ. 1, 4, 11) 2—5

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
վաճառվում են հետեւեալ հայերէն դասագրքերը.
Տեր-Ղեւոնդեան Ն., Մայրենի լեզու. ա. տ. 35 կ., բ. տարի 40 կ., գ. տարի 50 կ., գ. տարի
65 կ., Մայրենի լեզուի զերականութեան տարնքը 50 կ., Սրբ. Պատմութիւն—
Հին Կտակարան 50 կ., Նոր Կտակարան 50 կօպ.
Աղայեան Ղ., Ուսումնաւարների լեզուի. ա. տ. 25 կ., բ. տարի 30 կ., եւ գ. տարի 55 կ.
Նազարեան Էմ. Բան., Հայոց լեզուի ուսուցիչ գ. տ. 40 կ., կ. տարի 60 կ., Ընտիր հա-
տաւաններ ա. մասն—արձակ 1 ռուբլի:
Կ. Կուսիկեան Է. Լ. Սարգսեան, Մայրենի խօսք 70 կօպ.
Կոստանեան Կար., Նախաշարի—20 կ., Մաղկաբաղ, յըջան ա. գրաւոր 25 կ., յըջան բ. 35
կ., յըջան գ. 40 կ. Հիւսուածք գրաւորից աշխ. ա. մասն 75 կօպ.
Եղիեկ 50 կ., Ազաթանգեղոս 1 ռ. Սրբենացի 1 ռ. 25 կ., Նարեկ 1 ռ., Ղազար Փարպեցի 80 կ.
Մախանեան Սե., Գրաւորի հոլովում, խոնարհում 25 կ. եւ Գրաւորի համաձայնութիւնը 50 կ.
Ղուկասեան Հ., Քերականութիւն գրաւ. լեզուի հայոց 50 կ., Ընդհան. պատմ. հին դար 80 կ.
Բարաթեան Նիկ., Դասաւոր ընդհ. պատմութեան, մասն II միջին դար 1 ռ., մասն III նոր
դար Հայոց պատմութեան, յաւելումով 1 ռ.
Սահակեան Սահ. Բան., Դասաւոր կրօնի ա. տ. 20 կ., բ. տարի 20 կ., գ. տարի 30 կ.,
Սրբազան պատմութիւն հին ուխտի 45 կ., նոյն համառօտ արքունի դպրոցների
համար 30 կ., Սրբազան պատմութիւն նոր-ուխտի 40 կ., Գործք առաքելոց 40 կ.,
Ուսուցիչների համար հին-ուխտի մշակութիւնը 1 ռ. 75 կ., նոր-ուխտի մշակու-
թիւնը 2 ռ. 5 կ., Ուսուցումն քրիստ. կրօնի հատ. գ. 1 ռ. 50 կ., հատ. ե. 50 կ.
եւ Տառն պատմութեան 50 կ.
Աղանեան Գիւ. Բան., Կարգ ստուգածապաշտութեան Հայաստ. ս. եկեղեցւոյ, 34 նկարով, 50
կ., Աղօթատետր 10 կ., Կրօնի դասագրքը բ. տ. 15 կ., գ. տարի 15 կ., Տոմար եւ
տօնացոյց 50 կ.
Երզնկեան Եգ. Բան., Դասագրքը կրօնի ա. գրքով 20 կ., բ. գրքովի ա. մասը 30 կ.,
Բեգ-Նազարեան Սար. Բան., Համառօտ քրիստոնէական վարդապետութիւն՝ կազմով 60 կ.
Տեր-Գաբրիէլեան Գաբ. Բան., Քրիստոնէական վարդապետութիւն՝ կազմով 25 կ.
Մովսիսեան Յուս. վրդ., Դասաւոր կրօնի ա. տ. 15 կ., բ. տարի 20 կ. եւ գ. տարի 30 կ.
Տեր-Միքիլեան Սե., Հայաստ. ս. եկեղ. քրիստոնէական, ձեռնարկ դասաւորութեան 2 ռ.
Ուսումնաւ. ա. Գրոց, ներածութիւն 1 ռ.
Տեր-Սարգսեան Մախ., Հայկական գեղագրութ. 30 կ., Գեղագրութ. դասաւորման եղան. 20 կ.
Գեղագ-Բեգեան Յով., Ժողովածու թուրք. խնդիրների ամբողջ թուրք 40 կ.
Երզնկեան Գր., Թուրքական խնդիրներ եւ օրինակներ գ. տ. 35 կօպ.
Վարձեկեան, Դասագրքը թուրքական հատապոյ 60 կ.
Սիւսեանեան Պ., Սրբազան պատմութիւն հին Կտակարանի 50 կ.
Մանդիկեան Սեղ., Ընտանեկան աշխարհ 25 կ.
Բահարեան Սեղ., Առաջին ընթերցարան՝ կազմով 40 կօպ.
Դիմել՝ Թիֆլիս, Въ Центральную Книжную Торговлю. (հ.) 2—4

Բժիշկների եւ կիւնիստների բազմաթիւ փորձերը
ց ո յ ց ե ն տ ու ե Ր ո Ր
Ս Օ Մ Ա Տ Օ Ջ Ա Ն
Ա Մ Ե Ն Ա Ն Ա Ն Ս Ն Դ Ա Ր Ա Ր Ե Ի Կ Ա Ջ Դ Ո Ւ Դ Ի Ջ Մ Ի Ջ Ո Ց Ն Է
արիւնապակասութեան, թուլութեան, ջղային հիւանդութիւնների եւ առհասարակ բոլոր տե-
սակ ուժասպառ անող հիւանդութիւնների դէմ: ԾԱԽՎՈՒՄ Է ԲՈՒՈՐ ԴԵՂԱՏՆԵ
ՐՈՒՄ ԵՒ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒՄ: Սօմատոպաի ներդրութեան
նկարագրութիւնը եւ բազմաթիւ բժիշկների յայտնած կարծիքները նրա մասին, առաջին պա-
հանով, ձրիարար ուղարկում է
ՅՐԻԴ. ԲԱՅԷՐ եւ ԸՆԿ.
Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն Տ Ո Ւ Ն Ը
(Москва, Старая площадь, домъ Армантъ. Фрид. Байеръ и К°.)
(30, 31 օգ. 5, 15, 25 սեպ. 3, 13, 23, հոկտ. 2, 12, 22 նոյ. 4, 14, 24 դեկ.) 1—14